Արթուր Արմին

ԻՆՉՊԻՍԻ՞ ՀԱՅՐԵՆԻՔ ԿՈՒՆԵՆԱՆՔ ՎԱՂԸ

/ուրվագծեր/

* Աշխարհաքաղաքական տեսլական
* Ազգային գաղափարախոսություն
* Ժողովրդավարություն՝ հզոր պետություն
* Տասնյոթ անհրաժեշտ քայլեր՝

ժողովրդավար և հզոր հայրենիք ունենալու համար

ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍԼԱԿԱՆ

Գարեգին Նժդեհն իր գրվածքներում ունի այսպիսի հարցադրում՝ ***"Ինչպիսի՞ Հայրենիք կունենանք վաղը":*** Եվ ինքն էլ ճշգրիտ պատասխանում է իր հարցին՝ ***"Ինչպիսին որ կառուցվում է այսօր մեր մտքի եւ հոգու մեջ":*** Այսինքն, այսօր 10-12 միլիոնի հասնող աշխարհասփյուռ հայ ժողովուրդն իր հայրենիք-Հայաստանի համար արդյոք ունի՞ ընդհանրական տեսլական:

Հայրենիքի ապագայի մտահոգությունը՝ պաթետիկ հայրենասրիության կամ տեսաբանական ասպարեզի խնդիր չէ: Հայրենիքի ապագայի մտահոգությունը եւ կառուցումը՝ հայ մարդու, մեր երեխաների ազատ եւ երջանիկ ապրելու խնդիրն է: Ազգի հավաքական մտահայեցողության մեջ ***հայրենիքի ապագայի տեսլականը*** նախեւ առաջ ձեւակերպվում եւ հրամցվում է նրա մտավորականության կողմից, եթե իհարկե մտավորականությունն օժտված է հասարակության նկատմամբ սիրո եւ պարտավորության զգացողությամբ, ինչպես նաեւ՝ ունակ է ընդհանրական ազգային տեսլական ձեւավորել: Եթե հնագույն Հայաստանում այդ տեսլականը ձեւակերպում էր Արատտա երկրի բարձրագույն քրմական դասը, ապա այսօր՝ Հայաստան-հայրենիքի ապագայի առումով, հայ ազգային հավաքականության մտահայեցողական տեսլականները բարձիթողի են. հայ ժողովրդի համար նախատեսված եւ նրա ընդհանրական բարոյահոգեւոր նկարագրի հետ կապ չունեցող գաղափարաբանությունները ձեւակերպվում են կամ Լոնդոն/Վաշինգտոններում, կամ էլ Մոսկվաներում: Եվ մեր հասարակությունը, դրսից հրամցված խառնափնթոր "արեւմտյան լիբերալիզմի" եւ "արեւելյան օլիգարխիկ նոմենկլատուրային-չինովնիկական" կեղծ արժեհամակարգերի արանքներում, մնում է միայն մոլորության եւ վիճաբանության ստորին հարթակում:

Հայաստանի ապագայի առումով ո՞րն է 20-30 տարվա կտրվածքով ապագայի այն ***իրատեսական*** տեսլականը, որին պիտի ձգտի համայն հայությունն այսո՛ր, եւ իր հոգու ու մտքի մեջ կառուցի այն: Ավելին, հայոց համազգային տեսլականի *(Հայաստանի զարգացման հեռահար ծրագիր)* անհրաժեշտությունը՝ նրա գոյապահպանության խնդիրն է, քանի-որ հայ ազգային հավաքականության 70%-ը աշխարհասփյուռ է, եւ Հայաստան-հայրենիքը գտնվում է աշխարհաքաղաքական վտանգավոր-փակուղի տարածքում:

ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍԼԱԿԱՆ

Ինչպես առաջին եւ երկրեորդ աշխարհամարտերից հետո աշխարհի վարչաքաղաքական քարտեզը լիովին վերափոխվեց, այնպես էլ "սառը պատերազմից" հետո *(երրորդ աշխարհամարտ)* քաղաքական աշխարհի քարտեզը սկսեց փոփոխվել ՍՍՀՄ-ի եւ սոցիալիստական լագերի փլուզումով:

Այսօր դեռ այն բազմաթիվ փոփոխությունների է ենթարկվում եւ ենթարկվելու է: Ձեւավորվեցին եւ դեռ կձեւավորվեն նոր սուվերեն պետություններ, եւ կլինեն պետություններ որոնք կամ կկորցնեն իրենց սուվերենությունը կամ կվերափոխվեն՝ ըստ աշխարհաքաղաքական ուժերի վերադասավորման, որը դեռ չի հասել իր ավարտին: Եվ աշխարհաքաղաքական վերադասավորումների այս "լուռ" պայքարում, եթե հայ ժողովուրդը չկարողանա իր արդար տեղն ապահովել "արեւի տակ", ապա նրա գոյությունը որպես անկախ պետական միավոր՝ վտանգված է:

Ինչպիսի՞ն պետք է լինի Հայաստանի *(կամ հավաքական հայ ժողովրդի)* հնարավոր ակնկալիքը կամ ռազմավարությունը առաջիկա 20-30 տարվա կտրվածքով: Եվ կարո՞ղ է արդյոք Հայաստանի համար շահեկան ռազմավարությունը համադրելի լինել գերպետությունների շահերի հետ:

10-12 միլիոնի հասնող աշխարհասփյուռ հայությունն ունի մտավոր-մասնագիտական եւ տնտեսական ահռելի ներուժ: Համահայկական կապիտալի եւ մտավոր-մասնագիտական կարողության այսօրվա դրությամբ մեզ համար չօգտագործվող կամ անարդյունավետ վատնումի պատճառը՝ միմիայն մեր անձրագիր մոտեցումն է: Կազմակերպված լինելու եւ համազգային ծրագրի շրջանակներում այս ներուժը լիարժեք կիրառելու դեպքում, կարող ենք ունենալ թռիչքաձեւ արդյունքներ՝ թե՛ տնտեսական, թե՛ քաղաքական ասպարեզներում: ***Հայաստանը՝ որպես աշխարհասփյուռ հայերի հայրենիք, կարող է դառնալ <u>տարածաշրջանի գերպետություն</u>, եւ սա է միայն նրա շարունակական գոյության գրավականը 21-րդ դարի աշխարհաքաղաքական գոյապայքարում:***
ժամանակակից տեխնոկրատական 21-րդ դարում, տարածաշրջային գերպետություն դառնալու համար առաջնային անհրաժեշտություններ չեն՝ ո՛չ հարյուր միլիոնների հասնող բնակչություն ունենալը, եւ ո՛չ էլ՝ հարյուր հազարավոր քառակուսի կիլոմետր տարածքների վարչաքաղաքական սահմանները:

<u>Աշխարհաքաղաքական ռազմավարություն</u>

Հայաստանի Հանրապետության ապագան՝ որպես անկախ պետական միավոր, հնարավոր է միայն դեպի Սեւ Ծով իր տարածքներն ընդլայնելու եւ ներկա տնտեսաքաղաքական փակուղուց դուրս գալու դեպքում:

Այս նպատակին հասնելու հնարավոր ռազմավարական լծակներն են՝

ա.- իրավական լծակ:

---- 1915 թվի ցեղասպանության եւ պահանջատիրության հիմնախնդրի միջազգային իրավական դատարանով լուծում: Ըստ ՄԱԿ-ի միջազգային օրենքի՝ ***ցեղասպանության ճանաչում եւ հատուցում*** նշանակում է՝ ցեղասպանության

ենթարկված էթնոսի վերականգնման իրատեսական հնարավորություն.- տարածքային, տնտեսական եւ իրավական համարժեք փոխհատուցում, որպեսզի ցեղասպանության ենթարկված էթնոսը կարողանա վերականգնվել եւ ապահովի իր հետագա գոյությունը /տես՝ Ara Papian's "Legal Bases for Armenians Claims"/:

/Սակայն, նախ անհրաժեշտ է հայության համար իրատեսորեն ճշտել **տարածքային եւ ֆիննանսական պահանջատիրական այն սահմաձողը, որը մեզ՝ որպես ազգային տեսակ, ոչ թե կտանի Պատմական Հայաստանի 350 հազար քառակուսի կիլոմետր տարածքներում ապրող ավելի քան 30 միլիոնից ավելի քուրդ եւ թուրք բնակչության հետ միաձուլման եւ վերացման, այլ՝կուղղորդի դեպի վերականգնում եւ կնձեռնի գոյատեւման հնարավորություն ապագա դարերի քառուղիներում: Այս մոտեցումը ենթադրում է՝ցեղասպանության դիմաց "Վիլսոնյան իրավարար վճռում" տեղ գտած սահմանային քարտեզներից մասնակի **տարածքային պահանջատիրություն,** որը Հայաստանի սահմանները կընդլայնի դեպի Սեւ ծով: Ինչպես նաեւ ցեղասպանության դիմաց **ֆիննանսական պահանջատիրություն** հետեւյալ ֆորմատով - Թուրքիայի Հարապետության 50 տարով պարտավորվածությունը՝Հայաստանի Հանրապետության տարածքում արտադրվող ապրանքների առաքում դեպի Միջերկրական ծով՝առանց տուրքավճարումների/:*

---- Թուրքիայի վարչական տարածքում առանց համապատասխան պայմանագրի եւ օրինականության Կարս եւ Իգդիր նահանգների գտնվելը:

գ.- Գործընթացային լծակների հնարավորություն:

Ազգերի ինքնորոշման ինքնաբուխ եւ մշտական հեղափոխական գործընթացների հնարավորությունը տարածաշրջանում, որոնք ունեն միջազգային իրավունքի պաշտպանություն եւ հիմնավորում:

*/ *Թուրքիայում ազգային փոքրամասնությունների իրավունքների եւ ազգերի ինքնորոշման իրավունքի հիմքով՝ներքին քաղաքացիական պատերազմի եւ հեղափոխության վտանգի հնարավորությունը, քանի-որ թուրքական "էթնոսը" կազմում է Թուրքիայի բնակչության միայն 37%-ը:*

**Ըստ ՄԱԿ-ի միջազգային օրենքների, ատոմակայան ունեցող երկիրը, տարածաշրջանում պատերազմ սկսվելու դեպքում, իրավունք ունի իր զորքերը տեղաշարժել 100 մղոն շառավիղով, որպեսզի ապահովվի ատոմակայանը հնարավոր հարվածներից /:*

Պատկեր:Հայաստանը-ըստ-Սևրի-պայմանագրի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ 1919 - 1920 թթ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ 1919 - 1920 թթ.
Մաշտոցի անվան Հնագրության ինստիտուտ
Մաշտոցի անվան Հնագրության ինստիտուտ
Մաշտոցի անվան Հնագրության ինստիտուտ

Տնտեսական ռազմավարություն

1.- Արեւմուտք-արեւելք տրանսկոնտինենտալ երկաթուղային ճանապարհի ապահովումը ՀՀ տարածքով, քանի-որ այս երկաթուղու իրականացման համար աշխարհագրականորեն ամենակարճ եւ քաղաքականապես ամենակայուն տարբերակը Հայաստանի Հանրապետության տարածքով անցումն է:

*/ՀՀ ազգային միատարրության (98%) հանգամանքը, հայ ժառողվրդի եվրոպական ժողովուրդ լինելու, պրակտիկ նախաձեռնող եւ գիտատեխնիկական ստեղծագործ տեսակ լինելու հանգամանքներն աշխարհաքաղաքական վերադասավորումների ժամանակ միշտ հաշվի են առնվում գերպետությունների կողմից /:

2.- Հայաստանի Հանրապետության տարածքում գոյություն ունեցող խմելու բնական ջրի անվերջանալի պաշարների առկայությունը. խմելու բնական ջրի վաճառք Իրանին եւ Արաբական երկրներին:

3.- Հայաստանն ինքը կարող է դառնալ դեպի Եվրոպա *(Իրանական եւ Միջին Ասիական)* նավթի եւ գազի տրանսկոնտինենտալ խողովակաշարերի տարանցիկ երկիրը:

4.- Հաշվի առնելով 7-8 միլիոնի հասնող հայկական սփյուռքը, համաշխարհային՝ համահայկական ընդհանրական տնտեսական դաշտի ձեւավորման անհրաժեշտություն:

1.- Արեւմուտք-արեւելք տրանսկոնտինենտալ երկաթուղային ճանապարհ:

Դեռեւս 1930-ականներին, մեծ ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանը նամակով դիմելով այն ժամանակվա Խորհրդային Հայաստանի ղեկավարությանը, մատնանշում է, որ Հայաստանի ապագայի ռազմավարությունը պետք է լինի "Մետաքսի ճանապարհը". այսինքն, արեւմուտք-արեւելք տնտեսական ճանապարհը՝ երկաթգիծը, որը կսկսի Սեւ Ծովից, կանցնի Հայաստանով, կմտնի Պարսկաստան եւ կձգվի դեպի Հնդկաստան: Այսօր, ավելի քան արդիական է մեծ ճարտարապետի տնտեսաքաղաքական տեսլականը: Առաջիկա տասնամյակի կտրվածքով պետք է լուծվի "արեւմուտք-արեւելք" տրանսկոնտինենտալ առեւտրաշրջանառության ամենակարճ ուղեգծերից մեկը: Հայաստանի Հնարապետությունն ունի լիարժեք հավակնություն, որպեսզի այդ ճանապարհն անցի նրա տարածքով: Ավելին, արեւմուտք-արեւելք տրանսկոնտինենտալ երկաթգիծը եւ ավտոճանապարհը կարող է ունենալ երեք ուղղություններով ճյուղավորումներ՝

1.- Սեւ Ծովից *(Բաթում)* սկսվող եւ Հայաստանի հյուսիս-հարավ կառուցվելիք ճանապարհով մինչեւ Ռաշթ կամ Բանդար-ի Անզալի *(Իրանում Կասպից Ծովի նավահանգիստ է)* հասնող երկաթուղին, կարող է ծովային կապով կապել Հայաստանը Ռուսաստանի *(Մախաճկալա, Աստրախան)* հետ:

2.- Սեւ Ծովից *(Բաթում)* սկսվող եւ Հայաստանի հյուսիս-հարավ կառուցվելիք ճանապարհով մինչեւ Իրանի Պարսից ծոցի Բանդար-ի Իմամ Խոմեյնի նավահանգիստ հասնող երկաթուղին՝ եվրոպական ապրանքների համար դեպի Պասից Ծոց - Հնդկական Օվկիանոս լավագույն ուղին է:

3.- Սեւ Ծովից *(Բաթում)* սկսվող եւ Հայաստանի հյուսիս-հարավ կառուցվելիք ճանապարհով մինչեւ Իրանի Սարհաս քաղաքով Թուրքմենիստան, ապա Կիրգիզստան, Տաջիկստան, մինչեւ Չինաստան հասնող ճանապարհը արեւելք-արեւմուտք տնտեսաշրջանառության համար ամենակարճը եւ շահավետը կարող է լինել բոլոր երկրների համար: Եթե Հայաստանը կարողանա իրացնել հյուսիս-հարավ ավտոճանապարհային, ինչպես նաեւ երկաթուղային ուղղեգիծ՝ Maglev (250-581կմ/ժամ) տիպի գերարագնթաց երկաթուղային համակարգով, ապա Հայաստանը արեւմուտք-արեւելք միջազգային ապրանքային առաքումների համակարգում կունենա իր տեղը:

<u>2.- Խմելու բնական ջրի անվերջանալի պաշարների վաճառք:</u>

Երկրագնդի վրա խմելու ջրի պաշարները խիստ սահմանափակ են, իսկ երկրագնդի բնակչության թվաքանակը գնալով ավելանում է:

1996 թվականին անգլո-ամերիկյան նավթային ընկերությունների կոնսիլիումին առընթեր AMOCA տնտեսաքաղաքական վերլուծությունների կենտրոնի ներկայացուցիչ Ջոն Վուդսի Հայաստան կատարած այցելությունը

նպատակ ուներ պարզելու, թե ի՞նչ բացառիկ բնական հարստություն ունի Հայաստանը: 1996-1998 թվականներին Հարություն Առաքելյանը կառավարության առջեւ դրեց իր մշակած ծրագիրը, ըստ որի՝ Հայաստանի բնական քաղցրահամ ջուրը ամենաթանկ ապրանքն է, որը ինքավերարտադրվող եւ անսպառ է, եւ այն կարելի է վաճառվել թե՛ Իրանին եւ թե՛ Արաբական երկրներին *(1998 թ.-ին, Օման պետության Մասաղ քաղաքում Արաբական երկրների միջազգային տնտեսական սիմպոզիումը հայտարարեց, որ նրանք պատրաստ են մեկ բարել հում նավթը վաճառել կամ փոխանակել մեկ բարել քաղցրահամ բնական ջրի հետ):*

Հարություն Առաքելյանի մշակած ծրագիրն ուներ երեք փուլ՝ 1) ստեղծել Հայաստանի ջրի կառավարման մարմին, 2) պատնեշելով Մեղրիի կիրճը ստեղծել ջրամբար եւ ՀԷԿ, 3) ստեղծել Հայաստանի ստորգետնյա եւ վերգետնյա ջրամբարների ընդհանուր ցանց, 4) Մեղրիի ջրամաբարից ջուրը 222 լիտր/վայրկ. արագությամբ, խողովակներով մղել դեպի Իրան եւ Արաբական թերակղզի: Հարություն Առաքելյանի մշակած ծրագրի 1-ին եւ 2-րդ փուլերը իրականացման ընթացքի մեջ են: Հուսանք, որ նավթի եւ գազի փոխանակությունը Հայաստանի քաղցրահամ ջրի դիմաց կարող է ունենալ իր հաջորդ փուլերի զարգացումը, քանի-որ այն առաջնահերթ ռազմավարական ծրագիր է Հայաստանի համար:

3.- Դեպի Եվրոպա նավթի եւ գազի խողովակաշարերի տարանցիկ երկիր:

Ի տարբերություն Ադրբեջանական "Նաբուկո" ծրագրի, Հայաստանն ինքը կարող է դառնալ դեպի Եվրոպա Իրանական եւ Միջին Ասիական նավթի եւ գազի տրանսկոնտինենտալ խողովակաշարերի տարանցիկ երկիր, քանի-որ Հայաստանն ունի ներքին քաղաքական կայունության առավել մեծ գործակից *(ազգային մեծամասնության միատարրություն (98%):*

4.- Ստեղծել համաշխարհային՝ համահայկական ընդհանրական տնտեսական դաշտ, հաշվի առնելով 7-8 միլիոնի հասնող հայկական սփյուռքը:

Հայաստանի Հանրապետությունը իր տարածքում արտադրվող եւ արտահանվող ապրանքների համար ապահովում է միջազգային ապարնքանիշերի իրավական գրանցված բացառիկ իրավունքներ՝ ԱՄՆ եւ Կանադա, Եվրոմիություն եւ ԱՊՀ երկրներում, եւ իրականացնում է ապրանքանիշի վաճառք-օգտագործումը տարեկան վերահաստատումով, մասնավոր ընկերությունների կողմից դրանց նախորոք գնման պայմանով:

(The use of a trademark in this way is known as trademark use. Certain exclusive rights attach to a registered mark, which can be enforced by way of an action for trademark infringement, while unregistered trademark rights may be enforced pursuant to the common law tort of passing off. Different goods and services have been classified by the International (Nice) Classification of Goods and Services into 45 Trademark Classes (1 to 34 cover goods, and 35 to 45 services). The idea of this system is to specify

and limit the extension of the intellectual property right by determining which goods or services are covered by the mark, and to unify classification systems around the world).

---- Հայաստանի Հանրապետությունը ապահովում է պետական ապրանքանիշ ունեցող արտահանվող հայկական արտադրատեսակների մասնակի գովազդը արտերկրներում՝ հեռարձակվող հեռուստաթերներով:

---- Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է միջազգային ապրանքանիշերից առաջացած ամբողջ գումարը վերաբախշել ՀՀ-ու գործող ուսուցիչներին՝ որպես հավելյալ աշխատավարձ, եւ պետական իր բաց կայքեջում ներկայացնել թե՛ այս հիմնադրամի ծավալները, թե՛ դրանց վերաբախշումը՝ ուսուցիչներին - անուն առ անուն ներկայացումով:

Նման նախագիծը հնարավորություն կստեղծի՝ հայրենական ապրանքների համար սպառողական շուկայի ծավալային աճ արտերկրում, աշխատատեղերի ավելացում Հայաստանում, եւ "Սփյուռք-Հայաստան" տնտեսական եւ հոգեւոր միասնության ամրապնդում:

<u>Զինված ուժեր՝ պաշտպանություն</u>

Առ այսօր աշխարհում արդիական է մնում՝ ***"Որեւէ պետության քաղաքացիների անվտանգ կյանքի երաշխիքը՝ այդ պետության բանակն է"*** բանաձեւը: Տարածաշրջանում, Հայասատնի Հանրապետությունը պարտադրված է ունենալ գերիզոր բանակ՝ նոր կառույցների եւ առաջավոր մոտեցումների վերաձեւավորմամբ: Հայաստանի Հանրապետությանը անհրաժեշտ է ունենալ ռազմական արդյունաբերություն, որը հենված պետք է լինի սեփական գիտատեխնիկական մտքի վրա:

ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ



Հայ նոր մտավորական դասի ձեւավորում

Սոցիալիստական ինտերնացիոնալիզմի թմբիրից ազատված եւ դրա մի նոր տարբերակի՝ գլոբալիզացիոն կոսմոպոլիտիզմի թույնով չվարակված ու բանականությամբ օժտված մարդիկ հասկանում են, որ քաղաքական աշխարհում իրավմամբ գործում է՝ շահերի հակամարտությունն ու գերիշխանության հաստատումը, իսկ "քաղաքակիրթ" ***կոսմոպոլիտ քարոզչական*** գաղափարաբանական մեթոդաբանությունները՝ քնաբերներ են հիմարների համար: Որեւէ երկրի հասարակության զարգացման համար անհրաժեշտ է գաղափարախոսությո՛ւն: Որեւէ պետություն չի կարող դառնալ հզո՛ր, չի կարող ունենալ արդա՛ր սոցիալական հասարակություն, չի կարող ունենալ անպարտելի բանակ, եթե այդ երկրի հասարակության համար ազգային գաղափարախուսությունը չդառնա գերիշխող հավատամք:

1.1 *Ազգային գաղափարաբանությունը՝ հասարակության կամ ազգային հավաքականության ընդհանրական բարոյահոգեւոր նկարագրից բխող արժեքների ընդհանրական սկզբունքների համակարգն է, որի հիմքով ազգային հավաքականությունն ի վիճակի է պահպանել իր էթնիկական տեսակը, իր մշակույթը, իր լեզուն, կարող է ապահովել իր հասարակական ներդաշնակ զարգացումը՝ կյանքը, եւ դիմագրավել արտաքին թշնամուն:*

Բնությունն արարվում է տեսակների բազմազանության սիմֆոնիայով, որտեղ յուրաքանչյուր տեսակ ունի իր բնույթը եւ ֆունկցիան:

"Ո՛չ գոյ բնութիւն անանձն եւ ո՛չ գոյութիւն առանց դիմաց, վասնզի յանձինս եւ ի դեմս տեսանին՝ գոյութիւն եւ բնութիւն" /Յովհ. Օձնեցի/:

1.2 *Բնության մեջ յուրաքանչյուր միավոր ձգտում է հավաքականություն կազմել իր տեսակի հետ: Ազգային տեսակի հիմքով հավաքականության ձեւավորումն ունի անհատի ներքին պահանջից բխող բնույթ եւ պայմանավորված է բնության մեջ տեսակների գոյության եւ կենսական օրինաչափությամբ:*

Բնության մեջ հիմնարար եւ երկարակյաց են ազգային հասարակությունները: Կրոնական, սոցիալական, տնտեսական, եւ գաղափարաբանական ընդհանրություններով պայմանավորված հավաքականությունների ձեւավորումներն ունեն արտաքին պահանջից բխող բնույթ եւ ժամանակավոր են:

/Մանրանասն տես՝ Արթուր Արմին, "Արեւի լեռան տիեզերական գաղափարաբաությունը"/:

<u>Այսպիսով, Հայաստանի Հանրապետությունում, անհրաժեշտ է հայ մարդու, հատկապես հայ նոր մտավորական դասի ձեւավորում:</u>

ՀԽՍՀ-ում ձեւավորված հոմո-սովետիկում հավաքական մտավորականության մնացուկներով, եւ անցած 20 տարիների գաղափարական բացթողումով դաստիարակված սերնդով, հնարավոր չէ կատարել որեւէ լիարժեք համակարգային փոփոխություն, հնարավոր չէ լիարժեք կառուցել արդար հասարակություն եւ հզոր պետություն:

- Անհրաժեշտ է՝ Նժդեհյան ազգային գաղափարաբանությունը որպես "Հայրենապաշտություն" առարկա պարտադիր մտցնել ՀՀ դպրոցակրթական համակարգ:

- Անհրաժեշտ է նաեւ, որ հայոց պատմության եւ հայ գրականության դասագրքերը վերախմբագրվեն՝ մատաղ սերնդի դաստիարակության հարցում ունենան ներքին ազգային գաղափարաբանական նպատակայնություն:

- ՀՀ պետությունը պետք է սատարի հայ մշակույթի զարգացմանը: Անհրաժեշտ է, որ հեռուստատեսային ընկերությունների համար սահմանվի օրենք՝ հաղարդումների 51%-ը լինեն ազգային-մշակութային ծրագրեր:

- Հայաստանի եւ սփյուռքի դպրոցական եւ բուհական բոլոր միավորները պետք է լինեն Հայոց պատմության եւ հայ ինքնության մեկ-միասնական տեղեկատվական կրթական դաշտում՝ ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի վերահսկողության ներքո:

ԱՅՍՕՐ, ՆՈՐ՝ ԱԶԳԱՅՆԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ Է ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ, ՈՐԸ ԿԱՐՈՂ Է ԴԱՌՆԱԼ ՎԱՂՎԱ ՕՐՎԱ ՀԱՅ ՆՈՐ ՄՏԱՎՈՐԱԿԱՆ ԴԱՍԻ ԱՏԱՂՁԸ:

Այսօր Հայաստանում ոմանք փորձում են հայ ազգայնական երիտասարդությանը պիտակավորել՝ *"ֆաշիստ"* կամ *"ներկա իշխանությունների կամակատար"* տգիտության հասնող պիտակավորումներով: Անշուշտ որեւէ նոր ձեւավորվող ուժ, այն էլ երիտասարդական, օրինաչափորեն պիտի ունենա շեղումներ, սայթաքումներ եւ այլն, սակայն մեծ սերնդի ներկայացուցիչներից շատերը չեն կարողանում տեսնել, որ այս ազգայնական երիտասարդությունն է հասարակության այն շերտը, որն անվերապահ հավատում է իր ճշմարտությանը, եւ այս երիտասարդությունն է, որ վտանգի պահին որպես կամավոր ունակ է ինքնազոհաբերման, ունակ է զենք վերցնել եւ պաշտպանել հայրենիքը՝ ինչպես 1988-1990-ականներին Արցախի պատերազմ մեկնած հայ ազգայնականները: Հասարակության մեջ հավատացյալ երիտասարդությունից առավել զորեղ ուժ չի լինում: Եթե նույնիկ իշխանության լծակների մոտ կանգնած նյութապաշտ չինովնիկների թողտվությամբ են նրանք սկսել ձեւավորվել որպես էլիտայի ենթադրյալ հենարան, ապա պիտի տխրեցնեմ այդ չինովնիկներին. միայն ազգայնական երիտասարդությունն է ունակ դառնալ նոմենկլատուրային **ապազգային** էլիտայի գերեզմանափորը:

Անհրաժեշտ է օգնել եւ ուղղություն տալ մեր երեխաներին՝ մեր ազգայնական երիտասարդությանը, որովհետեւ միայն նրանք են, որ կարող են ձեւավորվել որպես՝ Հայաստանի վաղվա օրվա հայ նոր եւ ճշմարիտ մտավորականություն:

Ո՞Վ Է ՀԱՅ ԱԶԳԱՅՆԱԿԱՆԸ՝ ըստ "Արորդիներ" խմբի /տես՝ http://www.facebook.com/#!/groups/192664077442268 /
/ձեւակերպումները՝ Ն. Ս. Գալստյանի եւ Ա. Արմինի/

Հայ ազգայնական չէ նա՝ ով սատարում է ՀՀ ներկայիս կառավարության այս կամ այն չինովնիկի ապազգային գործընթացները: Հայ ազգայնական չէ նա՝ ով իր վրա է վերցրել դիտորդի պասիվ դերակատարություն եւ անմասն է ազգային խնդիրների լուծման գործնթացներից: Հայ ազգայնական չէ նա՝ ով ի վնաս ազգային շահերի կատարում է օտարերկրյա գրանտերի եւ կազմակերպությունների պատվերը:

1. Հայ ազգայնական է նա՝ ով իր Ազգի, Հայրենիքի (ողջ Պատմական Հայաստանի), պատմության, մշակույթի նկատմամբ ունի ուժեղ հոգեբանական կապվածություն, ինքնանույնացնվում է դրանց հետ՝ որպես իր սեփական «ես»-ի ինքնության մաս, անկախ իր ծննդավայրից:

2. Հայ ազգայնական է նա՝ ով իրեն համարում է Ազգի հարատևման եւ զորացման գերագույն նպատակի համար զինվոր, եւ արարում է այդ գերակա նպատակի համար:

3. Հայ ազգայնական է նա՝ ով հասկանում է, որ իր եւ իր ընտանիքի լիարժեք երջանկությունը հնարավոր է միայն հայ ազգատեսակի ընդհանուր երջանկության կառուցումով: Ազգայնական է նա՝ ով հասկանում է, որ իր եւ իր ընտանիքի լիարժեք երջանկությունը հնարավոր է միայն՝ ազգային բարոյահոգեւոր արժեքների հիմքով արդար հասարակության եւ ազգային պետության կերտումով:

4. Հայ ազգայնական է նա՝ ով իր անձնական շահի համար չի ոտնահարում իր ազգակիցների եւ հայ հասարակության ընդհանրական շահը: Ազգայնական է նա՝ ով անձնական մակարդակով պատասխանատվություն է զգում իր Ազգի և Հայրենիքի համար, եւ իր կենսագործունեությամբ նպաստում է ազգային խնդիրների լուծմանը:

5. Հայ ազգայնական է նա՝ ով գիտակցում է իր ազգությունը, ում համար իր ցեղակիցների /ազգակիցների/ հետ հաղորդակցման նախընտրելի բանավոր լեզուն Հայերենն է, իսկ նախընտրելի գրավոր լեզուն՝ Հայատառը:

6. Հայ ազգայնական է նա՝ ով համարում է, որ իր Հայրենիքը Հայաստանն է /ե՛ւ արեւելյան, ե՛ւ արեւմտյան /, որտեղ ապրելը, արարելն ու սերունդ տալը նրա համար պարտավորություն և բարձրագույն պատիվ է, անկախ իր քաղաքացիությունից: Ազգայնական է նա՝ ով նույնիսկ արտերկրում ապրելով գործում է ի շահ հայ ազգային խնդիրների իրագործման, եւ ձգտում է իրականություն դարձնել հայրենիքում ապրելու իր երազանքը:

7. Հայ ազգայնական է նա՝ ով հանդիսանում է Հայ Ազգային մշակույթի կրողը, զարգացնողն ու աճող սերնդին անշեղորեն փոխանցողը: Ազգայնական է նա՝ ով հստակ գիտակցում է, որ առանց ազգային մշակութային միջավայրի՝ չի կարող դաստիարակվել Հայրենապաշտ սերունդ, նրանում չի կարող սերմանվել ու զարգանալ Հայկական ոգի:

8. Հայ ազգայնական է նա՝ ով հարգում է օտար ազգերին եւ նրանց ստեղծած մշակույթը, եւ միաժամանակ, իր կենսագործունեության ընթացքում մերժում է օտար վարդապետությունների կոսմոպոլիտիզմը, որի հիմքը եսակենտրոն անձնապաշտությունն է, ինչպես նաեւ՝ մերժում է օտարամոլությունը:

9. Հայ ազգայնական է նա՝ ով իր վարքով ու բարոյականությամբ հանդիսանում է իր դավանած արժեքների ու գաղափարների մարմնացումը՝ ուսանելի օրինակ այլոց համար: Նրա համար հայեցի ապրելակերպի հիմնասկզբունքներն են արդարությունն ու բարությունը, արիությունն ու ինքնազոհողությունը, պարկեշտությունն ու հավատարմությունը՝ հիմնված ազգային արժեհամակարգին նվիրվածության վրա:

10. Ազգայնական է նա՝ ով փորձում է համախմբել ազգի բոլոր կարող ուժերը հանուն ընդհանուր գերնպատակի, անողոք է իր Ազգի թշնամիների և «ազգի տականքի» նկատմամբ:

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ՝ ՀԶՈՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ



Առանց իրական ժողովրդավարության հնարավոր չէ կառուցել իրավական արդար հասարակություն եւ հզոր պետություն:

Այսօր աշխարհի առաջավոր ուժերը փորձում են առաջ քաշել պետական-քաղաքական եւ պետական կառավարման նորագույն մեթոդներ: Սակայն ***պետական կառավարման համակարգային փոփոխությունները*** չեն կարող կյանքի կոչվել առանց գաղափարաբանության եւ ***հասարակական-քաղաքական համակարգային փոփոխությունների:*** Եվ ամենակարեւորը՝ որեւէ երկրում առաջարկվող համակարգային փոփոխություն պետք է բխի այդ երկրի հասարակության հավաքական բարոյահոգեւոր արժեհամակարգից՝ նկարագրից. այլապես այն չի կարող կենսունակ լինել:

Պետության մեջ քաղաքացիները բացի իրենց անհատական շահերից եւ իրավունքներից, նաեւ ունեն ընդհանրական շահեր եւ իրավունքներ՝ ըստ իրենց սոցիալական խավի պատկանելության:

Իրական ժողովրդավարական հասարակության ներդաշնակ գոյությունը հնարավոր է նրա անդամների իրավունքների հավասարությամբ, եւ այդ հասարակությունը կազմող դասերի ու սոցիալական խավերի շահերի պաշտպանությամբ, ինչը ենթադրում է պետության քաղաքականության մշակման օրենսդիր ատյանում այդ խավերի ներկայացչություն:

Դեմոկրատական համարվող ԱՄՆ-ում, Կանադայում եւ արեւմտյան Եվրոպայի առաջավոր երկրներում, քաղաքական կուսակցությունների գոյությունը չի պայմանավորված հասարակության սոցիալական այս կամ այն խավի շահերով: Այսօր, ԱՄՆ-ում, որեւէ երեսփոխանի "ընտրություն" հնարավոր է միայն ընտրարշավի համար պահանջվող միլիոնավոր դոլլարներով: Եվ "երեսփոխանի" ընտրարշավի համար գոյացած միլիոնավոր դոլարների հասնող նվիրատվությունները կատարում են հիմնականում կորպորացիաների ներկայացուցիչ մեծահարուստ անհատները: Ի վերջո, կուսակցությունները եւ "ընտրված" երեսփոխանները ներկայացնում են կորպորացիաների եւ դրանց տերերի շահերը, որը հակասության մեջ է ընդհանուր հասարակական շահերի եւ ժողովրդական դեմոկրատիայի գաղափարաբանության հետ: Եվ ուրեմն, նախ պետք է պարզել, թե ինչ ենք հասկանում՝ "ժողովրդավարություն" /դեմոկրատիա/ ասելով, եւ երկրորդ՝ արդյո՞ք "ժողովրդավարությունը" պատկանում է միայն տեսաբանական պատկերացումներին, թե՞ մարդկային քաղաքակրթության պատմության ընթացքում /անցյալում եւ այժմ/ եղել են եւ կան իրական ժողովրդավարական համակարգեր: Եվ վերջապես, որքանո՞վ է "ժողովրդավարությունը" բխում այս կամ այն ազգային հասարակության բարոյահոգեւոր ընդհանրական նկարագրից:

Հնագույն պետությունների /Արատտա, Շումեր/ հասարակություններում, դեռեւս հինգ հազար տարի առաջ, կար տասներկու ատենակալների դատարան, եւ հասարակության սոցիալական շերտերի ներկայացուցիչներին ընդգրկող բարձրագույն խորհրդակցական մարմին՝ ***Աշխարհաժողով,*** որը պետության եւ հասարակության համար կայացրած որոշումներին մասնակից էր:

"Արքայի հրավերով գումարվող բարձրա՝ույն խորհրդակցական մարմին՝ Ավագների ժողով է հիշատակվում Հայաստանի առաջին՝ Արատտա պետությունում (Ք. ա. 28-27-րդ դդ.)"[1]:

"Հայկական լեռնաշխարհում Բարձրագույն խորհրդակցական մարմին՝ Ավագների ժողով է հիշատակվում նաև Հայասա-Ազզի թագավորությունում (Ք. ա. 15-13-րդ դդ.)"[2]:

"Հայկական լեռնաշխարհում՝ Վանի թագավորությունում (Ք. ա. 9-7-րդ դդ.), հիշատակվում են արքայի խորհրդականները, որոնք, թերևս, Ավագների ժողովի անդամներն էին"[3]:

Հայկական լեռնաշխարհում ձեւավորված պետական համակարգերի պատմության ընթացքում Աշխարհաժողովը պահպանվեց մինչեւ միջնադար:

"Աշխարհաժողովն ընդգրկում էր ժողովրդի բոլոր խավերի ներկայացուցիչներին՝ արքայից մինչև ռամիկ շինական, որոնք "աշխարհովին միաբան խորհուրդ անելով՝ լուծում էին երկրի կյանքում ծառացած խնդիրները: Այդ առումով Աշխարհաժողովը երկրի ներկայացուցչական բարձրագույն ժողովն էր, դեմոկրատիայի բարձրագույն արտահայտությունը՝ իր ժամանակի համար շատ լայն ընդգրկումով (կային այլ ժողովներ ևս. եկեղեցական, նախարարական, քաղաքային ավագանու խորհուրդներ)[4]:

"Աշխարհաժողովն ուներ շատ լայն իրավունքներ՝ ընդհուպ մինչեւ արքայի գահազրկում կամ կաթողիկոսի ընտրություն (Մ.թ. 16 թվականին Նպատ լեռան մոտ հրավիրված Աշխարհաժողովը գահընկեց արեց հայոց արքա Վոնոնես Արշակունուն)"[5]:

"Աշխարհաժողով" գաղափարի արտահայտությունը նստակյաց ցեղերի բարոյահոգեբանական նկարագրին հատուկ գենետիկական արտահայտություն է:

"Աշխարհաժողովի ծնունդը կապվում է դեռևս տոհմացեղային վաղնջական ժամանակների հետ, երբ ստեղծվում էին նստակյաց ցեղերի ավագների ժողովներ կամ խորհուրդներ"[6]:

Զարգացած երկրների, հատկապես ԱՄՆ-ի հասարակությունն ունի ոչ թե ժողովրդավարություն, այլ միայն՝ ժողովրդավարական խաբկանք: Սոցիալական խավերից անջատ, եւ սոցիալական խավերի շահերով չհիմնավորված, նմանատիպ գաղափարախոսություններով կուսակցություններից "ընտրված" երեսփոխանները, երկրի բարձրագույն ատյանում չեն ներկայացնում լայն

հասարականության շահերը. նրանք վաղուց հանդիսանում են կորպորատիվ շահերի ներկայացուցիչներ:

Պետության գերագույն օրենսդիր ատյանում հասարակության այս կամ այն սոցիալական խավի ներկայացուցիչը /ըստ ժողովրդավարական տրամաբանության/ պետք է կենսականորեն պատկանի սոցիալական այդ խավին, եւ այդ երեսփոխանի անձնական շահը պետք է բխի տվյալ սոցիալական խավի շահերից, որին ինքը ներկայացնում է:

Տեսականորեն, ճշմարիտ ժողովրդավարական հասարակության կերտումը հնարավոր է՝ "Նաշի հավասարակշռության թեորեմի"*7 գործարկման դեպքում: Այսինքն, եթե հասարակության յուրաքանչյուր սոցիալական խավ կարողանա ներկայացնել իր շահերը պետական քաղաքականության մշակման գործում, եւ նրանցից յուրաքանչյուրն ըստ խաղի խիստ կանոնների նախորոք իմանա մնացածների հավասարակշիռ ռազմավարությունը, ապա արդյունքում կշահի յուրաքանչյուրը՝ ըստ իր ներդրման համեմատ,- առանց ուղիղ հավասարության պարտադրանքի: Նման "ներդաշնակ հավասարակշիռ" հասարակության տարբերակում, ***թեզի*** եւ ***անտիթեզի*** փոխարեն, ***սինթեզն*** է դառնում գերակա գործառույթ*8, որը ձեւավորում է ընդունելի առաջարկություն հակադիր ուժերի հարաբերություններում: Եվ ժողովրդավարական պետության այս տարբերակը ենթադրում է հասարակության բարոյահոգեւոր արժեքների նոր համակարգ ("խաղի նոր կանոններ"):

Սակայն ո՞րն է հասարակական այն ուժը, որն ի զորու է իրական ժողովրդավարություն իրականացնել: Շտապենք ասել, որ պրոլետարիատի հեգեմոնիայի մասին Մարքսիզմի մտածածին թեզն անհեթեթություն է, եւ պրոլետարիատը երբեւէ չի եղել ու չի կարող լինել այն մտածող եւ ինքնակազմակերպվող մարմինը, որն ի վիճակի լինի առաջադրել եւ լուծել հասարակական մեծ խնդիրներ *(Ռուսական հեղափոխության՝ "պրոլետարական հեղափոխություն" անվանումը կեղծիք է: Հեղափոխությունը կատարեց առաջին աշխարհամարտի ընթացքում զինված ժողովուրդը, որի 80%-ը գյուղացիությունն էր, իսկ բոլշեւիկյան հեղաշրջումը հրահրվեց եւ ֆինանսավորվեց օտարերկրյա ուժերի կողմից):*

Հին Հունաստանում, Պտղոմեոսյան Եգիպտոսում, միջնադարյան Հնդկաստանում եւ միջնադարյան Եվրոպայում գոյություն ունեցած արհեստակցական միությունները (guilds) կարելի է դիտարկել որպես մեր ժամանակների արհմիությունների նախակարապետներ: Հայաստանում այն պահպանվեց մինչեւ 20-րդ դարի սկիզբը, որը հայտնի է "արհեստավորական համքյարություններ" անուով: Արհեստակցական միություններն ունեին իրենց հավաքական շահերի վրա խարսխված երկաթյա օրենքներ:
Այսօր արհմիությունները երկրի տնտեսության տարբեր ոլորտներում աշխատավոր ժողովրդի լավագույնս կազմակերպված միավորներն են: Եթե

արհմիություններին ընդլայնվելու հնարավորություն տրվի, եւ նրանք կազմակերպվեն ու միավորվեն որպես երկրի ճյուղային տնտեսության արհմիութենական միություններ, ապա արդյունքում նրանք կարող են ներկայացնել պետության ամբողջական հասարակությունը՝ սոցիալական իր բոլոր խավերով: Եվ պետության գերագույն օրենսդիր պալատում արհմիությունների ներկայացուցիչները որպես փորձառություն ունեցող մասնագետներ, որ լավատեղյակ են իրենց ոլորտի մարդկանց կարիքներին եւ տվյալ ճյուղի զարգացման հեռանկարային հնարավորություններին, կարող են երկրի գերագույն օրենսդիր ատյանում լավագույնս ներկայացնել հասարակության համընդհանուր շահերը: Սակայն, այսօր, իբրեւ թե ժողովրդավարության արտահայտություն, քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներից կազմված գերագույն օրենսդիր մարմինն է ներկայանում իբրեւ ժողովրդի կողմից "ընտրված" ու նրա շահերը պաշտպանող: Արհմիությունները, որոնք կարող էին հանդես գալ որպես իրական ժողովրդական ներկայացչություն, լիովին զրկված են օրենսդիր կամ գործադիր իշխանությունից եւ ունեն ենթակայական բնույթ՝ թե՛ արեւմտյան բուրժուական բանկային իմպերիալիզմի տնտեսական կացութաձեւում, թե՛ սոցիալիստական երկրների համակարգերում, քանի որ արհմիությունը այն ինքնաբուխ կազմակերպված իրական ուժն է, որն ամենից վտանգավորն է հասարակության սոցիալական բուրգի վերեւում գտնվողների համար *(այսօր արդեն՝ միջազգային բանկային օլիգարխիկ կլանների համար):* Միեւնույն ժամանակ, հնարավոր չէ իսպառ սպանել արհմիությունները, որովհետեւ այն ինքնաբուխ, ինքնածննունդ բնույթ ունի. եթե կա որեւէ հավաքականություն, որի անդամներն իրար հետ կապված են՝ աշխատանքային, սոցիալական, մասնագիտական կապերով, ապա ինքնին առաջանում է այդ հավաքականության շահերը պաշտպանող կազմակերպությունը: Պատահական չէ, որ 20-րդ դարում, թե՛ պրոլետարական գաղափարախոսության վրա հիմնված սոցիալիստական երկրների դիկտատորական համակարգերում, եւ թե՛ բուրժուական երկրների համակարգերում, արհմիությունների դերը դարձրեցին երկրորդական, իսկ հետո՝ ենթակայական, քանի-որ առայժմ, այս իրական ուժը զսպելու միակ եղանակը՝ ենթակայական կարգավիճակի ապահովմամբ նրա վերահսկողությունն է:

Սակայն, պետության գերագույն օրենսդիր ատյանում եթե միայն լինի արհմիությունների ներկայացուցիչներից կազմված պալատ, ապա այն կարող է օրենսդրորեն "սպանել" հասարակության տնտեսության մեջ ազատ շուկայական հարաբերությունների ճկունությունը եւ տնտեսական շահի վրա հիմնված անհատական նախաձեռնողականությունը: Եվ ուրեմն, նույնիսկ արհմիությունների ներկայացուցիչնեից կազմված գերագույն մարմինը պետք է ունենա իր նկատմամբ հակադիր ուժ, որպեսզի աշխատի ոչ թե ***"թեզը"*** կամ ***"անտիթեզը",*** այլ՝ երկու հակադրությունների միջեւ հաշտվողական եւ

համատեղելի հնարավոր տարբերակը՝ ***"սինթեզը":*** Եթե պառլամենտական երկու պալատներից մեկը համամասնական ընտրությամբ ձեւավորվեր արհմիությունների ներկայացուցիչներից, իսկ երկրորդ պալատը լիներ՝ քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներից ընտրված, ապա այս երկրորդ պալատը նախ՝ կճշտեր իր ֆունկցիան որպես հասարակության ազատ եւ ընդհանրական գաղափարների արտահայտող, երկրորդ՝ կլիներ արհմիութենական պալատին հավասարակշռող "հակառակորդ", եւ ամենակարեւորը,- պետության գերագույն օրենսդիր պալատում կգործեր՝ շահերի դուալիստական հակասությամբ միասնության բանաձեւը:

Քաղաքականություն նշանակում է՝ այս կամ այն սոցիալական խավերի կամ խմբավորումների տնտեսական շահերի հիմքով հարաբերություն: Եվ որեւէ արտաքին ուժ կամ արտաքին ուժերից կախված տեղայնական ներքին ֆինանսատնտեսական խմբավորում, իր իսկ բնույթով չի պաշտպանելու հասարակության ընդհանրական շահերը: Անհատ ձեռներեցն իր բնույթով գիշատիչ է, որը օրենսդրական կամ կառավարական չինովնիկի կողմից ներքին հովանավորչական ազատություն ստանալով, իր ձեռքն է կենտրոնացնում երկրի ամբողջ հարստությունը: Մյուս կողմից, ձեռներեց անհատներին կամ խմբավորումներին վերացնելու դեպքում հասարակության տնտեսական մոդելը դառնում է՝ քարացա՛ծ, ռեգրեսի՛վ եւ լճանում է /ՍՍՀՄ-ի օրինակով/: Ազատ ձեռներեցը կամ տնտեսաֆինանսական խմբավորումները անհրաժեշտություն են երկրի տնտեսության զարգացման համար: Սակայն, անհրաժեշտ է առաջին հերթին՝ տեղայնական անհատ ձեռներեցի /կամ խմբավորումների/ շահերի եւ հասարակության շահերի համադրում: Այս առումով հասարակության մեջ քաղաքական ինստիտուտների դերը որպես կուսակցական գաղափարների եւ ներկայացուցիչների "ընտրական" գործընթաց՝ հակադրված է ժողովրդավարության սկզբունքներին: Թե՛ առաջավոր արեւմուտքում, թե՛ արեւելյան Եվրոպայի եւ Ասիայի երկրներում քաղաքական կուսակցություններն ի վերջո տնտեսական օլիգարխիկ կորպորացիաների շահերի ներկայացչություններ են: Իսկ Հայաստանի նման երկրներում, կուսակցությունները հիմնականում, ի վերջո, դառնում են՝ իշխանական չինովնիկի կամ օլիգարխի "գրպանի գործիք" սեփական շահերի համար, եւ անտեսվում են ժողովրդական բազում սոցիալական խավերի շահերը:

Փաստորեն, պետության գերագույն օրենսդիր ատյանի երկպալատանի կառուցվածքի դեպքում, որտեղ պալատներից մեկը՝ արհիմությունների ներկայացչություն, իսկ երկրորդը՝ քաղաքական կուսակցությունների ներկայացչություն ձեւաչափն է առաջարկվում,- ենթադրում է՝ անհատական եւ հասարակական ընդհանրական իրական շահերի համադրում եւ իրական ժողովրդավարական մոտեցում:

Իրական ժողովրդավարական պետություն կառուցելու վերեւում առաջարկված տեսական մոդելը լիովին տարբեր է սոցիալիզմին հատուկ պետության նոմենկլատուրային մոդելից: Ներկայացված տարբերակում թե՛ անհատը, թե՛ հասարակության սոցիալական խավերը ունենում են իրենց հավասարակշիռ իրավունքներն ու ազատությունը: Ավելին, այս մոդելը, որը հիմնված է արհմիությունների եւ մասնավոր կապիտալի շահերի համադրման սկզբունքի՝ ***"սինթեզ տարբերակի"*** վրա, մասնավոր խոշոր նախաձեռնող կապիտալիստի կամ կորկորատիվ կապիտալի համար ենթադրում է նաեւ պետական՝ օրինական պրոտեկզիոնիզմի *(հովանավորչություն)* քաղաքականության որդեգրում, որը կարող է խոշոր ձեռնարկության համար ապահովել՝ տեղական շուկայում մրցակցելու համար մենաշնորհային իրավունքներ, տնտեսական կայունություն, ինչպես նաեւ քաղաքական աջակցություն՝ թե՛ հասարակության, թե՛ պետության կողմից:

Այսօրվա երրորդ աշխարհի երկրներում, ինչպես նաեւ ԽՍՀՄ-ի եւ սոցիալիստական համակարգի փլուզումից հետո մոտ 20 տարի կապիտալիստական ֆորմացիա թեւակոխած երկրներում, այս կամ այն երկրի օլիգարխիկ ընտանիքների գոյությունը պայմանավորված է՝ համաշխարհային միջազգային բանկային կլանների կողմից տարվող քաղաքականությամբ: Նույն պատկերն է նաեւ ԱՄՆ-ում *(ըստ պաշտոնական տվյալների ԱՄՆ-ի պետբյուջեի 90%-ը գոյանում է բնակչության 1%-ի հարկագանձումից),* միայն այն տարբերությամբ, որ այստեղ համակարգը՝ բազմաշերտ եւ բազմաֆունկցիոնալ է, որը սոցիալական միջին դասակարգի գոյության շնորհիվ կլանային էլիտային հնարավորություն է տալիս մանեւրելով պահպանել իր կարգավիճակը: Դրան նաեւ նպաստում են՝ միջազգային վալյուտային ֆոնդերի շրջանառության վերահսկման մանիպուլիացիաները, ինչպես նաեւ՝ այլ երկրների բնական ռեսուրսների եւ առեւտրաճանապարհների շահագործման հնարավորությունը: Գլոբալիզացիային ձգտող միջազգային բանկային այս կլանն արդեն վաղուց հաղթահարելով կենտրոնական Եվրոպայում, ԱՄՆ-ում եւ Կանադայում իր առջեւ ծառացած խոչնդոտները, այսօր փորձում է արեւելյան Եվրոպայի եւ Ասիայի երկրներ ներթափանցելով իր ավարտին հասցնել գլոբալիզացիայի քաղաքական գործընթացը:

Փաստորեն, որեւէ երկրի ***ադմինիստրատիվ-ֆինանսական կլանային համակարգը*** *(Հայաստան, Ռուսաստան, Լիբիա, Եգիպտոս եւ այլն)* ձեռնտու է միջազգային կորպորատիվ-բանկային կլանի գործընթացների համար, քանի-որ այս կամ այն երկրի մի բուռ մարդկանց խումբն ունի երկու հիմնական բնութագրում:

1-ին,- ***Կառավարման ադմինիստրատիվ-ֆինանսական կլանային համակարգն*** ունի ենթակայական կախվածություն արեւմտյան բանկերից. օլիգարխների հարստության կուտակումները տեղակայված են արեւմտյան

բանկերում: */Պատահական չէ Վ. Պուտինին արեւմտյան գլոբալիզացիոն ուժերի ստրատեգ Զ. Բժերզինսկու իբր կատակով խոսքը՝ "Պարոն Պուտին, ռուսաստանցի օլիգարխների գումարները գտնվում են արեւմտյան մեր բանկերում (որոշ հաշվարկներով տրիլիոն դոլարի հասնող): Հիմա այդ գումարները մե՞ն են, թե՞ - ձերը"/:*

2-րդ,- ***Կառավարման ադմինիստրատիվ-ֆինանսական կլանային համակարգը*** մշտապես ունի պոտենցիալ հեղափոխության հնարավորություն՝ երրերուն համակարգ է, քանի-որ կառուցված է՝ կա՛մ մեկ անհատի հեղինակության, կա՛մ վերեւում հայտնված կլանային խմբի կողմից վերահսկվող ուղղահայաց ադմինիստրատիվ պարզագույն սխեմայով: Այս կարգի երկրներում հասարակության համար օլիգարխիկ էլիտան ոչ թե ազգային բուրժուազիա է, այլ գեր իրավունքներով օժտված կլան է, որը հասարակության համար մշտապես սոցիալական ատելության թիրախ է դառնում, քանի-որ այդ երկրներում՝ ա/հարստության ու հնարավորությունների մեծ մասը մենաշնորհված են, եւ բ/երկրում չկա սոցիալական միջին դասակարգ:

Հայաստանին, Բելոռուսիային, Ռուսաստանին եւ նման այլ երկրներին, պետք է հասկանալ, որ ***"նոմենկլատուրային չնովնիկական համակարգով",*** կամ ***"գրպանի կուսակցություններով",*** կամ ***"մեկ անհատի պաշտոնական հեղինակության իշխանությամբ",*** հնարավոր չէ դիմագրավել արեւմուտքի աշխարհաքաղաքական նկրտումներին *(հին օրերի լումայնափոխ միջազգային այս նորդեմք Շայլոկին):* ***Անհրաժեշտ է, որ պետության հասարակության շահերը եւ ազգային լոկալ օլիգարխի շահերը հակադրվելու փոխարեն համատեղվեն:*** Այսինքն, անհրաժեշտ է, որ այսօրվա օլիգարխը դառնա ազգային բուրժուազիա, որը իր իսկ շահերի համար հասկանա հասարակության ընդհանրական շահերի հետ համադրվելու անհրաժեշտությունը:

Որեւէ երկրի պետական եւ ազգային շահերը, ինչպես նաեւ տվյալ երկրի մեծահարուստների շահերը կարող են ապահով լինել միայն իրական ժողովրդավարության պարագայում՝

ա/ երբ հասարակության սոցիալական լայն խավերի ներկայացուցիչները ընդգրկված կլինեն պետության ներքին եւ արտաքին քաղաքականության մշակմանը՝ օրենսդիր ատյանում *(Ազգային Ժողովը որպես սոցիալական բոլոր խավերի ներկայացչություն, եւ "12 ատենակալների ժողովրդական դատարան" համակարգային փոփոխություններ),*

բ/ երբ մասնավոր կամ կորպորատիվ կապիտալի եւ հասարակության ընդհանրական շահերը կհամադրվեն,

գ/ երբ երկրում բնակչության գոնե 40-60 տոկոսը կդառնա միջին խավ *(Հայաստանում դա հնարավոր է միայն ներմուծող երկրից առաջին անհրաժեշտության գյուղատնտեսական ապրանքների արտադրությամբ ինքն իրեն ապահովող երկիր դառնալու դեպքում),*

դ/ երբ հասարաքաղաքական եւ կառավարման համակարգային փոփոխությունները կբխեն հասարակության բարոյահոգեւոր ընդհանրական նկարագրից,

ե/ երբ երկրում ազգային եւ պետական շահերից բխող ազգային գաղափարախոսությունը կդառնա գերիշխող թե՛ սահմանադրությամբ, թե՛ իրական կյանքում *(հասարակության դաստիարակմամբ՝ դպրոցական-կրթական համակարգից սկսած):*

---

*1, *2, *3, *4, *5,- Ա. Մովսիսյան, "Աշխարհաժողով", "21-րդ դար", 2006, թիվ 3 /13/, էջ 164-171:
*6, - Հ. Մանանդյան, "Ֆեոդալիզմը Հին Հայաստանում", Երկեր, հ. Դ, Ե., 1984, [էջ 249; 6, 828]:
*7,- Ջոն Ֆորբես Նաշ, մաթեմատիկոս, 1994թ. Նոբելյան մրցանակակիր: “Equilibrium Points in N-person Games”, Proceedings of the National Academy of Sciences 36 (1950), 48–49. MR0031701.
*8,- Johann Gottlieb Fichte (1762 – 1814), գերմանացի փիլիսոփա: Ջ. Ֆիխտեի՝ ***թեզ, անտիթեզ, սինթեզ*** սկզբունքի համաձայն, ***թեզը***՝ առաջարկված գաղափարն է, ***անտիթեզը***՝ առաջարկված գաղափարի հերքումն է, իսկ ***սինթեզը***՝ այս երկու հակադրությունների միջեւ հաշտվողական եւ համատեղելի հնարավոր տարբերակն է, որը ձեւավորում է ընդունելի առաջարկություն:

ՏԱՄՆՅՈԹ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՔԱՅԼԵՐ՝
ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐ ԵՎ ՀԶՈՐ ՀԱՅՐԵՆԻՔ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ



Նախաբան

1-ին,- Այսօր Հայաստանի հանրապետությունում ապրող քաղաքացիները, ինչպես նաեւ համայն հայությունը հիմնականում, ժողովրդավարություն ասելով ունի տարբեր, հատկապես կիսատ-պռատ պատկերացումներ: Եվ ամենակարեւորը՝ թյուր պատկերացումներ ունենալով արեւմտյան տնտեսաքաղաքական արժեհամակարգերի մասին, մեր ժողովուրդը հավաքականորեն "ժողովրդավարությունը" այս կամ այն կերպ կապում է կա՛մ արեւմտյան արժեքային համակարգերի մեխանիկական ներմուծման, կա՛մ էլ ավանդական "բարեպաշտ առաջնորդ-վոժդ" ունենալու անհարիր գործոնների հետ: Համակարգային հեղափոխությունները իրականություն դառնում են միայն այն դեպքում, երբ հասարակության հավաքական միտքը պատրաստ է հասարակական-քաղաքական կամ պետական կառավարման համակարգային փոփոխությունների համար: Եվ եթե իսկապես հասարակության մեծամասնության հավաքական մտահայեցողությունը հասուն է համակարգային փոփոխությունների համար, ապա այդ թռիրքաձեւ փոփոխությունները կարող են լինել կամ ներքեւից՝ հեղափոխական, կամ վերեւից՝ բարեշրջման տարբերակներով:

2-րդ,- Պետք է ի վերջո հասկանալ, որ եվրոպացի կամ ռուս "բարի քեռիների" մասին հեքիաթները հիմարություններ են, համաշխարհային քաղաքականությունը տրանս-կոնտինենտալ շահերի հակամարտություն է, եւ համաշխարհային քաղաքականության մեջ՝ գիշատիչների խնջույքում, ոչ մի դերակատար չի ղեկավարվում արդարության սկզբունքներով: Որեւէ արտաքին ուժ կամ միջազգային տնտեսական խմբավորում ունի իր շահերի նպատակայնությունը՝ գերշահույթ ստանալ թույլի հաշվին: "Արեւմտյան դեմոկրատական արժեքներ" հասկացողությունը միայն արեւմտյան գաղափարախոսական գովազդ է՝ զոհին հիմարացնելու համար: Արտաքին ուժերին դիմակայելու համար անհրաժեշտ է, որ նախկին ԽՍՀՄ-ի երկրները կարողանան կառուցել ***իրական ժողովրդավարություն,*** որը կլինի տարբեր արեւմտյան ժողովրդավարությունից, այլապես արեւմտյան կազմակերպված համակարգի դեմ, օրինակ ռուսական կամ հայկական վարչա-չինովնիկական նոմենկլատուրային հիերարխիկ հին մոդելները, - անհուսալի թղթե տնակներ են:

Ինչպե՞ս է Հայաստանի Հանրապետության հասարակությունը գնալու Ազգային Ժողովի ընտրությունների, իսկ մի որոշ ժամանակ անց՝ նախագահական ընտրությունների: Ի վերջո՝ ի՞նչ ենք մենք ուզում: Մեր հասարակության կամ քաղաքացու կոմնորոշումը լինելու է՝

1) անձի պաշտանմուքի՞ - "բարի քեռի" ընտրելո՞ւ հիմքո՞վ, թե՞ -

2) "լավ" գաղափարախոսություն ունեցող կուսակցությանը նախապատվություն տալու հիմքով:

Ահա այս երկու հարցերը ինքներս մեզ տալով, հեշտորեն կարող ենք պատասխանել՝ արդյո՞ք Հայաստանի այսօրվա քաղաքական ծանոթ դեմքերի մեջ *(թե՛ իշխանական, թե՛ ընդիմադիր)* կան բարի կամ ***բարեպաշտ*** "վոժդ-քեռիներ",

որ նաեւ ունեն կամային եւ մտավոր կարողություններ: Արդյո՞ք գոյություն ունեցող կուսակցությունների գաղափարախոսություններն ունեն համակարգային վերափոխումների մտայնություն անգամ:

Ընտրություն պետք է կատարել՝ առաջարկելո՛վ: Առաջարկելով որդեգրե՛լ "Ազգային ծրագիր" - հետեւյալ քայլերի իրագործման պահանջ ներկայացնելով:

ՊԱՀԱՆՋ-ՔԱՅԼ -1
ՀՀ Սահմանադրական փոփոխությամբ՝ արհմիությունների կարգավիճակի բարձրացում ընդհուպ մինչեւ Ազգային Ժողով նրանց ընդլայնակի ընդգրկում, եւ արհմիությունների կազմակերպման համար համապատասխան գործընթացների նախաձեռնում:

ՊԱՀԱՆՋ-ՔԱՅԼ -2
Հայաստանի Հանրապետության օրենսդիր բարձրագույն ատյանում՝ Ազգային ժողովում, երկու պալատների առկայություն, որտեղ ԱԺ պալատներից մեկը պետք է ձեւավորվի որպես՝ ***արհեստակցական միությունների /արհմիությունների/ համամասնական ներկայացչություն,*** իսկ մյուսը՝ ***քաղաքական կուսակցությունների մեծամասնական ընտրական ներկայացչություն:*** Միայն այս դեպքում երկրի բարձրագույն օրենսդիր ատյանում լիարժեքորեն կարող են ներկայացված լինել երկրի բոլոր սոցիալական խավերը, որոնք եւ կպաշտպանեն իրենց սեփական շահերը *(մանրամասն տես՝ "Ժողովրդավարություն՝ հզոր պետություն" բաժինը):*

ՊԱՀԱՆՋ-ՔԱՅԼ -3
Վերացնել Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի պատգամավորի անձեռնմխելիությունը: ԱԺ պատգամավորը կարող է ունենալ անձեռնմխելիության իրավունք միմիայն ԱԺ շենքում՝ իր աշխատանքի ընթացքում եւ արտասահման աշխատանքային այցի ընթացքում: Խորհրդարանից դուրս ԱԺ պատգամավորն ունի ՀՀ շարքային քաղաքացուն հավասար իրավունքներ եւ պարտականություններ:

ՊԱՀԱՆՋ-ՔԱՅԼ -4
Դատական համակարգի փոփոխություն:
Դատական համակարգը որպես օրենսդիր եւ գործադիր կառավարման մարմիններից անկախ եւ ինքնուրույն քաղաքացիական կառույց, պետք է ամրագրի 12 երդվյալ ատենակալների ինստիտուտի հիմնում եւ գործարկում:
(Այս համակարգային փոփոխությամբ դատարանը դառնում է ժողովրդական, քանի-որ երկրի բոլոր քաղաքացիները դառնում են դատական համակարգի մասնակից: Յուրաքանչյուր քաղաքացու քաղաքացիական պարտքն է լինել դատական ատենակալ: Յուրաքանչյուր դատավարության ժամանակ

ատենակալի ընտրությունը կատարվում է համակարգչի միջոցով՝ լիարժեք գաղտնիությամբ: Ո՛չ դատարանը, ո՛չ ատենակալը նախօրոք չգիտի թե ինքը որպես ատենակալ ո՞ր դատավարությանն է մասնակցելու):
(Որպես սխեմատիկ օրինակ, կարելի է ուսունասիրել եւ վերախմբագրմամբ ներմուծել ԱՄՆ համակարգը):

ՊԱՀԱՆՋ-ՔԱՅԼ -5
Կատարել ՀՀ Սահմանադրության փոփոխություն եւ ՀՀ կենտրոնական բանկը հայտարարել պետական հսկողության ներքո պետական կառույց:
(Այսօրվա ՀՀ Սահմանադրությամբ /Հոդված 83.3./, Կենտրոնական բանկը չի ենթարկվում Հայաստանի Հանրապետությանը, այլ իրավական անկախ ինստիտուտ է, որն իրականում կախման մեջ է ՄԱՀ-ից: Տես՝ ՀՀ Սահմանադրությունը):

ՊԱՀԱՆՋ-ՔԱՅԼ -6
Հայոց լեզուն, պատմությունը եւ մշակույթը ՀՀ Սահմանադրությամբ պետք է ստանան ազգային անվտանգության կարգավիճակ. Հայոց լեզվի նկատմամբ որեւէ ոտնձգություն պետք է կրի քրեական պատասխանատվություն:

ՊԱՀԱՆՋ-ՔԱՅԼ -7
Հայաստանի Հանրապետությունում անհրաժեշտ է հայ մարդու, հատկապես հայ նոր մտավորական դասի ձեւավորում: Նժդեհյան ազգային գաղափարաբանությունը որպես "Հայրենապաշտություն" առարկա՝ պարտադիր մտցնել ՀՀ դպրոցակրթական համակարգ:

ՊԱՀԱՆՋ-ՔԱՅԼ -8
Գործող լրատվական եւ հեռուստատեսային շրջափակման վերացում:
ՀՀ պետությունը պետք է սատարի հայ մշակույթի զարգացմանը: Անհրաժեշտ է, որ հեռուստատեսային ընկերությունների համար սահմանվի օրենք՝ հաղարդումների 51%-ը լինեն ազգային-մշակութային ծրագրեր *(1961թ.-ին Ֆրանսիայում ընդունված օրենքի նմանությամբ):*

ՊԱՀԱՆՋ-ՔԱՅԼ -9
Նոր սերնդի ինքնության դաստիարակում եւ ինքնաճանաչողություն: Հայաստանի եւ սփյուռքի դպրոցական եւ բուհական բոլոր միավորները պետք է լինեն Հայոց պատմության եւ հայ ինքնության մեկ-միասնական տեղեկատվական կրթական դաշտում՝ ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի վերահսկողության ներքո:

ՊԱՀԱՆՋ-ՔԱՅԼ -10
ՀՀ Սահմնադրության մեջ փոփոխությամբ՝ ՀՀ բնապահպանական հարստությունը ոչնչացնող նախագծերի արգելում, իսկ արդեն վնաս հասցրած

բիզնես արտադրական միավորների նկատմամբ՝ վնասների փոխհատուցման եւ վնասների վերականգնման քրեական պատասխանատվության անխուսափելիություն:

ՊԱՀԱՆՋ-ՔԱՅԼ -11
ՀՀ Սահմնադրության մեջ սահմանել՝ 1915-1923 թվականների Հայոց Մեծ Եղեռնի ուղղակի կամ անուղղակի ուրացումը եւ կամ ժխտումը ՀՀ տարածքում պատժվում է քրեօրեն:

ՊԱՀԱՆՋ-ՔԱՅԼ -12
Հայաստանի Հանրապետության կողմից դատական հայցի ներկայացում ՄԱԿ-ին առընթեր միջազգային դատարան՝ 1915-1923թթ. Հայոց Մեծ Եղեռնի - ցեղասպանության ճանաչման, հայ ժողովրդի հայրենազրկման եւ փոխատուցման պահանջի վերաբերյալ:

ՊԱՀԱՆՋ-ՔԱՅԼ -13
Հայաստանի Հանրապետության կողմից Արցախի Հանրապետության ճանաչում:

ՊԱՀԱՆՋ-ՔԱՅԼ -14
ՀՀ պետական վերահսկողությամբ եւ պետական աջակցության ծրագրերով Հայաստանը գյուղատնտեսական առաջին անհրաժեշտության ապրանքների առումով ներկրող երկրից վերածել իր պահանջների 70%-ը ապահովող ինքնաբավ երկրի:

ՊԱՀԱՆՋ-ՔԱՅԼ -15
Քառահարկ պրոգրեսիվ հարկային քաղաքականության անցում.

ա) Արտադրություն կազմակերպող բիզնեսները զերծ են պետական հարկերից երեք տարվա ընթացքում /օրենքը հետադարձ ուժ չունի/:

Հայաստանի Հանրապետությունը 1%-ից մինչեւ 3% տոկոսադրույթով, կարեւորագույն ճյուղերում արտադրություն կազմակերպելու համար պարտավորվում է պայմանագրային հիմունքներով վարկավորել մանր եւ միջին արտադրական բիզնեսները:

բ) Արդեն գործող մինչին եւ մեծ արտադրական, առեւտրական եւ սպասարկման ոլորտների բիզնեսների համար պարզեցված հարկային համակարգ՝ մաքուր շահույթից 25%-ի չափով գանձում:

դ) Գերշահույթ ապահովող բիզնեսների համար պարզեցված հարկային համակարգ՝ մաքուր շահույթից 33%-ի չափով գանձում:

գ) Ներկրող բիզնեսների համար պարզեցված հարկային համակարգ՝ մաքուր շահույթի 33-40%-ի չափով գանձում:

ՊԱՀԱՆՋ-ՔԱՅԼ -16
Նվազագույն աշխատավարձի, թոշակի եւ նպաստի որոշում՝ սպառողական զամբյուղին համապատասխան: Սահմանել նվազագույն աշխատավարձի չափ, որը հավասարակշիռ բարձրացումներ պետք է ունենա՝ դրամի ինֆիլացիոն տատանումներին զուգահեռ: Պետական կամ մասնավոր ընկերության կողմից նվազագույն աշխատավարձի օրենքը /չափը/ խախտելու դեպքում սահմանել դրամական պատիժ (յուրաքանչյուր առանձին դեպքի համար՝ երեք միլիոն դրամի չափով) եւ կրկնվելու դեպքում՝ քրեական պատասխանատվություն:

ՊԱՀԱՆՋ-ՔԱՅԼ -17
Պետության ներքին կյանքի ներդաշնակությունը խոչընդոտող, հասարակության միասնությունը փլուզող եւ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը հակադրված՝ գաղափարական, քաղաքական, հասարակական, կրոնական եւ այլ կազմակերպությունների եւ նրանց քարոզչությունների արգելում եւ քրեական հետապնդում: